

պարագայք տանջանաց եւ հա[մա]յնգամայն չարչարանաց անտանօր կային ի լրման: Ամենակայն եւ ապենիագն Քրիստոս Աստուած՝ Հարբ անեղականաւն եւ Հոգւովն սրբով միշտ զմեզ եւ զքոյսն նախախնամեալ փրկեսցէ պատահարաց երեւելեաց եւ աներեւութից աստ եւ ի հանգերձելումն: Եւ աստանօր սրբոց աղօթիւք ի յողորմութիւն Քրիստոսի յիշեսցի հոգի հանգուցելոյն այնորիկ, եւ թէ կենդանի է՝ որ նախկնաբար մակազրեալ է զայդ անուանակոչութիւն ի վերայ չիրիցոյն հոչակեալ Սանսուխս Դժոխսց(*) : Յիշեսցի եւ յողորմութիւն Քրիստոսի հոգիք ծնողաց եւ նախնեաց քոց, ցողելով միշտ զցօղն ողորմութեան, արժանաւորելով մասին սրբոց ի լոյս փառաց տեսլեան արքայութեան իւրում, ամէն:

(Ձեռ. Թիւ 1058, քղ. 30բ-31բ)

(Առ Եղիազար կաթողիկոս յԵրուսաղէմ, վասն մահուան Ապրոյի)

Պատուական զլիսոյգ պատուական աջիգ աղերս հոգւոյ մերոյ համբոյրն ընծայեսցի, որով առնեմ ծանուցումն ապստամբելոյն Աստուծոյ զբարձումն ի միջոյ եւ զվաղափուլ կործանումն ամբարտակին ազգելոյ քոյոյ բանի ըստ սրբագրոյն վրէժխնդրելոյ յԱս-

(*) Թարգմանութիւն ձեռնագրէմ Ներսիսի կոչումին, որ տրուած էր ժամանակակից Անդրէաս երէցին: Վերջնոյս մասին ակնարկութիւններ կան նաև վերեւի տողերուն մէջ: